ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N 91 -Ա

« 07 » ՄԱՐՏԻ 2024Թ

«ՄԱԼԻՇԿԱՅԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԳԱՅԱՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 216-րդ հոդվածի, 218-րդ հոդվածի 1-ին մասի, 220-րդ հոդվածի 1-ին մասի, 222-րդ հոդվածի, 223-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 224-րդ և 226-րդ հոդվածների, 227-րդ հոդվածի 2-րդ մասի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի, «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 14-րդ հոդվածի 1-մասի 2-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով մարզպետի տեղակալ Ա. Խաչատրյանի կողմից 2024 թվականի մարտի 4-ին «Մալիշկայի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ կատարված աշխատանքային այցի մասին զեկուցագիրը և անհիմն համարելով ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2024 թվականի մարտի 5-ի թիվ 01/15/1589-2024 գրության հիման վրա Գ. Հարությունյանի 2024 թվականի մարտի 5-ի գրավոր բացատրությունը (մուտքի համար՝ 2208)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Աշխատանքային պարտականությունները ոչ պատշաճ կատարելու՝ սուր շնչառական վարակներով, մասնավորապես շրջանառող գրիպով պայմանավորված իրավիճակի զարգացման միտումներին հետամուտ լինելու նպատակով բնակչության համար առողջության առաջնային պահպանման ծառայությունների հասանելիությունը ոչ աշխատանքային օրերին ապահովելու, շաբաթ օրը հերթապահություն սահմանելու վերաբերյալ ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարի 2024 թվականի փետրվարի 20-ի թիվ 05/07-4/1288-2024 հանձնարարականը չկատարելու համար «Մալիշկայի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար

Գայանե Հարությունյանին ենթարկել կարգապահական պատասխանատվության՝ կիրառելով «նկատողություն» կարգապահական տույժը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Գ. Հարությունյանին ծանուցելու հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում:

Recoverable Signature

Signed by: KOLYA MIKAELYAN 3507670100

Կ. ՄԻՔԱԵԼՅԱՆ

p. Եղեգնաձոր